

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լևոն Ազիզյանի՝ 2023 թվականի մայիսի 20-ից հունիսի 3-ը ներառյալ Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև) գործուղման արդյունքների վերաբերյալ

### 1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ազիզյան Լևոն, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

### 2. Գործուղման վայրը և ժամկետները

Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև), 2023 թվականի մայիսի 20-ից հունիսի 3-ը ներառյալ

### 3. Հրավիրող կողմը

Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն (այսուհետ՝ ՀՕԿ)

### 4. Գործուղման նպատակը

Մասնակցություն ՀՕԿ 19-րդ կոնգրեսին և ՀՕԿ Տարածաշրջանային ասոցիացիա VI-ի նստաշրջանին:

### 5. Քննարկված թեմաները

20.05.2023թ.- մասնակցություն ֆինանսական խորհրդատվական հանձնաժողովի քառասուներեքերորդ նիստին, որին ընթացում ներկայացվել են ՀՕԿ-ի 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունները և արտաքին գնահատման/աուդիտորի հաշվետվությունը, վերանայվել են Ֆինանսական հարցերի վերաբերյալ Կոնգրեսի և Գործադիր խորհրդի փաստաթղթերը, ինչպես նաև քննարկվել են 19-րդ հաշվետու ժամանակաշրջանի համար (2024–2027թթ.) առավելագույն ֆինանսական ծախսերը:

22.05.2023թ. - տեղի է ունեցել ՀՕԿ 19-րդ կոնգրեսի բացումը, որի ժամանակ հաստատվել է Կոնգրեսի օրակարգը, քննարկվել են 2024-2027թթ. ռազմավարական պլանն ու բյուջեն, ինչպես նաև ռազմավարական հետևյալ երկու նախաձեռնությունները՝ «ՄԱԿ Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնությունը և «ՀՕԿ կողմից համակարգված Զերմոցային գագերի մոնիթորինգի գլոբալ ենթակառուցվածք» նախաձեռնությունը (Նախաձեռնությունների վերաբերյալ քննարկումները շարունակվել են նաև հաջորդ օրերի ընթացքում): Ընտրությունների անցկացման համար ձևավորվել են համապատասխան հանձնաժողովներ: Ներկայացվել են նաև ՀՕԿ նախագահի հաշվետվությունը և Գլխավոր քարտուղարի զեկույցը, ինչպես նաև Տարածաշրջանային ասոցիացիաների նախագահների, Տեխնիկական հանձնաժողովների նախագահների և Հետազոտական խորհրդի նախագահի, Ֆինանսական խորհրդատվական հանձնաժողովի նախագահի, Հիդրոլոգիական ժողովի նախագահության, Գիտական

խորհրդատվական խմբի նախագահի և Կլիմայի փոփոխության վերաբերյալ միջկառավարական հանձնաժողովի նախագահի հաշվետվությունները:

23.05.2023թ. - մասնակցություն ՀՕԿ Տարածաշրջանային ասոցիացիա VI-ի արտահերթ նստաշրջանին (RAVI): Կոնգրեսի նիստի ընթացքում ներկայացվել է նաև Հասարակության կարիքների համար ծառայությունների շրջանակը:

Ռումինիայի Ազգային օդերևութաբանության կենտրոնի գլխավոր տնօրեն Ելենա Մատեսկուն ընտրվեց ՀՕԿ Տարածաշրջանային ասոցիացիա VI-ի (Եվրոպա) նախագահ: Համաձայն ՀՕԿ կանոնակարգի, այս պաշտոնը Ելենա Մատեսկունին թույլ է տալիս աշխատելու նաև ՀՕԿ գործադիր խորհրդում:

24.05.2023թ. - Դիտարկումների, ենթակառուցվածքների և տեղկատվական համակարգերի (INFCOM) հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացվել է 2019թ. հունիսից 2023թ. մայիս կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը և 2020-2022թթ. ՀՕԿ գնահատման զեկույցը՝ Երկրի համակարգի դիտարկումների և կանխատեսումների վերաբերյալ:

25.05.2023թ. – Քննարկվել են Համաշխարհային եղանակային հետազոտության ծրագրի 2024-2027թթ. իրականացման պլանը և Մթնոլորտի գլոբալ ծառայության 2024-2027թթ. գիտության և իրականացման պլանը:

26.05.2023թ. - մեկնարկել է ՀՕԿ-ի Հիդրոլոգիական Ասամբլեան (HA-3), որի հիմնական նպատակն էր ՀՕԿ-ի գործունեության մեջ հիդրոլոգիայի ինտեգրմանը նպաստելը և Օպերատիվ հիդրոլոգիական համայնքի մոբիլիզացումը:

Հիդրոլոգիական Ասամբլեայի ընթացքում՝

- կայացան նախագահի և փոխնախագահի ընտրություններ,
- իրականացվեցին խմբագրումներ՝ Կոնգրեսի հաստատմանը ներկայացվող փաստաթղթերի բովանդակության վերաբերյալ,
- ներկայացվեցին մի շարք թեմաներ՝
- ՀՕԿ տեսլականը, Հիդրոլոգիայի ռազմավարությունը և դրա հետ կապված Գործողությունների ծրագիրը,
- 2022 թվականի ջրային ռեսուրսների գլոբալ վիճակի զեկույցը. ուղեցույց առաջնահերթությունների վերաբերյալ,
- Առաջարկվող նորացված տեխնիկական առաջադրանքը՝ հիդրոլոգիական կոորդինացիոն խմբի (HCP) համար,
- ՀՕԿ հիմնական հանձնաժողովների շրջանակներում հիդրոլոգիական ծառայություններին և հիդրոլոգիական մոնիթորինգին առնչվող աշխատանքային խմբերի կողմից ստացված արդյունքները և հիմնական ձեռքբերումները,
- ՀՕԿ-ի հիդրոլոգիական կենտրոնների ինտեգրված մշակման և կանխատեսման համակարգը (WIPPS),
- Համագործակցությունը ՄԱԿ-ի այլ կառույցների (FAO, UNECE, UNEP և UNESCO) հետ,
- ՀՕԿ-ի ներդրումը Ջրի և Կլիմայի Կոալիցիայում,

- Ընթացիկ և պլանավորված հիդրոլոգիական ծրագրերը (Հանկարծահաս հեղեղումների ռիսկի կառավարման համակարգ (FFGS), Վոլտայի հեղեղումների և երաշտի կառավարում, Կենտրոնական Ասիայի վաղ նախազգուշացման համակարգեր, Համաշխարհային հիդրոլոգիական ցիկլի դիտարկման համակարգ (WHYCOS), Համաշխարհային հիդրոլոգիական իրավիճակ և կանխատեսման համակարգ (HydroSOS)),
- HydroSOS տարաշաճրջանային իրականացման պլանները:

Կոնգրեսի նիստի ընթացքում քննարկվեց ՀՕԿ կարողությունների զարգացման ռազմավարությունը:

27.05.2023թ. - Շարունակվել են ՀՕԿ Հիդրոլոգիական Ասամբլեայի աշխատանքները, որի շրջանակներում քննարկումները հիմնականում նվիրված են եղել HydroSOS-ի և HydroHub-ի (Գլոբալ հիդրոմետրիայի աջակցության միջոց/կարողություն) հետագա զարգացմանն ու բարելավմանը, ազգային և տարածաշրջանային մակարդակներում ներդրման հնարավորություններին, ինչպես նաև Համաշխարհային հիմնական/հենքային դիտարկումների ցանցի (GBON) ձեռքբերումներին և ապագային:

Տեղի է ունեցել նաև ըստ տարածաշրջանների հիմնական հիդրոլոգիական խնդիրների և հարցերի քննարկում՝ տարածաշրջանային հիդրոլոգիական խորհրդականների նախագահությամբ:

Ներկայացվել են նաև «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնության շրջանակում իրականացվող Հեղեղումների կառավարման Ասոցացված ծրագրի (APFM), Ինտեգրացված երաշտի կառավարման Ծրագրի (IDMP), Հանկարծահաս հեղեղումների ռիսկի կառավարման համակարգ (FFGS) և մի շարք այլ ծրագրերի օրինակներ:

Մասնակցել են նաև այլ միջոցառումների, մասնավորապես՝

- Վաղ նախազգուշացում բոլորի համար նախաձեռնության շրջանակներում կազմակերպված ՀՕԿ Առաջնորդության և կառավարման ֆորումին:
- Արհեստական բանականությունը՝ աջակցելու «Վաղ նախազգուշացում բոլորի համար» նախաձեռնությանը, որը կենտրոնացված էր արհեստական բանականության կիրառմանը եղանակին, ջրին և կլիմային առնչվող հարցերում:

29.05.2023թ. - Գործադիր խորհրդի կողմից Կոնգրեսին է ներկայացվել հետևյալ ռազմավարական նախաձեռնությունը՝ Կրիոսֆերայի վրա գլոբալ և տարածաշրջանային ազդեցության փոփոխությունների առաջնահերթությունները:

Քննարկվեցին նաև մի շարք այլ լրացուցիչ առաջարկություններ՝ ներկայացված Հիդրոլոգիական ասամբլեայի կողմից, որոնք ընդունվեցին համապատասխան որոշումներով:

30.05.2023թ. - Տեղի է ունեցել քննարկում ՀՕԿ կառավարման բարեփոխումների գնահատման և սահմանադրական մարնինների կառուցվածքի վերաբերյալ, ներկայացվել է ՀՕԿ կառավարման բարեփոխումների արտաքին գնահատման հաշվետվությունը:

31.05.2023թ. - Գործադիր խորհրդի կողմից Կոնգրեսին են ներկայացվել առաջարկություններ՝ կատարելու փոփոխություններ Ընդհանուր, տեխնիկական, ֆինանսական և անձնակազմի հետ կապված կարգավորումներում: Քննարկվել է նաև Կոնգրեսի նախորդ բանաձևերի վերանայման հարցը:

01-02.06.2023թ.- տեղի են ունեցել ՀՕԿ առանցքային պաշտոններում առաջադրված թեկնածուների ընտրություններ և նշանակում՝ ՀՕԿ Գլխավոր քարտուղարի նշանակում, ՀՕԿ Նախագահի և փոխնախագահների ընտրություններ, ինչպես նաև Գործադիր խորհրդի անդամների ընտրություններ:

Պրոֆեսոր Ա. Սելեստե ՍԱՌԻԼՈՆ (Արգենտինա) նշանակվեց ՀՕԿ Գլխավոր քարտուղար,

Դոկտոր Աբդուլլա ԱԼ ՄԱՆԴՈՒՍԸ (Արաբական Միացյալ Էմիրություններ) ընտրվեց ՀՕԿ նախագահ,

Պարոն Դաուդա ԿՈՆԱՏԵՆ (Կոտ դ'Իվուար) ընտրվեց ՀՕԿ առաջին փոխնախագահ,

Պարոն Էդին ՄՈՐԱՆԸ (Իռլանդիա) ընտրվեց ՀՕԿ երկրորդ փոխնախագահ,

Դոկտոր Մրությունջայ ՄՈՀԱՊԱՏՐԱՆ (Հնդկաստան) ընտրվեց ՀՕԿ երրորդ փոխնախագահ:

ՀՕԿ Գործադիր խորհրդի անդամներ ընտրվեցին ՀՕԿ անդամների հետևյալ Ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների տնօրենները.

Պարոն Մոեգամատ Իշամ ԱԲԱԴԵՐ (Հարավային Աֆրիկա)

Պրոֆեսոր Գերհարդ ԱԴՐՅԱՆ (Գերմանիա)

Դոկտոր, պրոֆեսոր Քրիստոֆ ԱՓԵՆՋԵԼԵՐ (Շվեյցարիա)

Դոկտոր Գիլերմո Անտոնիո ԲԱՅԳՈՐՐԻԱ ՊԱՋ (Պերու)

Բրիգադայի Գեներալ Լուկա ԲԱՅՈՆԵ (Իտալիա)

Տիկին Դայան ՔԵՄՓԲԵԼ (Կանադա)

Դոկտոր Ժենլին ՉԵՆ (Չինաստան)

Պարոն Վոլկան Մուսլու ԿՈՋԿՈՒՆ (Թուրքիա)

Դոկտոր Գարվին ԿԱՄՄԻՆԳՍ (Գայանա)

Պրոֆեսոր Փեննի ԷՆԴԵՐՍԲԻ (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն)

Դոկտոր Դեյվիդ ԳԻԿՈՒՆԳՈՒ (Քենիա)

Պարոն Քենեթ ԳՐԵՀԵՄ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)

Պարոն Էնդրյու ՋՈՆՍՈՆ (Ավստրալիա)

Պրոֆեսոր Դվիկորիտա ԿԱՐՆԱՎԱՏԻ (Ինդոնեզիա)  
Դոկտոր Առլեն ԼԵՅԻՆԳ (Բրիտանական Կարիբյան տարածքներ)  
Դոկտոր Ալբերտ ՄԱՐՏԻՍ (Կուրասաո և Սինթ Մարտեն)  
Պրոֆեսոր Մանսուր Բակո ՄԱՏԱԶՈՒ (Նիգերիա)  
Տիկին Դուդուզիլե ՆՀԼԵՆԳԵԹՎԱ-ՄԱՍԻՆԱ (Էսվատինի)  
Պարոն Մասանորի ՕԲԱՅԱՇԻ (Ճապոնիա)  
Տիկին Վիրջինիա ՇՎԱՐՅ (Ֆրանսիա)  
Դոկտոր Ռոար ՍԿԱԼԻՆ (Նորվեգիա)  
Տիկին Լիզան ՍՈԱՐԵՍ ՖԵՐԵՅՐԱ (Բրազիլիա)  
Գեներալ-մայոր Հեշամ ԹԱՀՈՒՆ (Եգիպտոս)  
Պարոն Սիմպլիս ՏՉԻՆԴԱ ՏԱԶՈ (Կամերուն)  
Տիկին Չին Լինգ ՎՈՆԳ (Սինգապուր)  
Դոկտոր Հի-Դոնգ ՅՈ (Կորեայի Հանրապետություն)  
Պարոն Ջոել ԶՈՒՆԳՐԱՆԱ (Բուրկինա Ֆասո):

## **6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

2023 թվականի մայիսի 22-ից հունիսի 2-ը երկկողմ ձևաչափով հանդիպումներ են ունեցել ՀՕԿ անդամ-երկրների մի շարք Ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների ղեկավարների և պատվիրակությունների հետ, մասնավորապես՝ Ղազախստանի Ազգային հիդրոօդերևութաբանական ծառայություն, Ռուսաստանի Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի դաշնային ծառայություն, Իրանի Իսլամական Հանրապետության Օդերևութաբանական կազմակերպություն, Շվեյցարիայի Օդերևութաբանության և կլիմայաբանության դաշնային գրասենյակ, Ավստրիայի Երկրաբանության, երկրաֆիզիկայի, կլիմայագիտության և օդերևութաբանության դաշնային ինստիտուտ, Մետեո-Ֆրանս ինտերնեյշնլ, Մետեո-Ֆրանս, Հարավային Կորեայի Օդերևութաբանական վարչություն, Արաբական Միացյալ Էմիրությունների Օդերևութաբանության ազգային կենտրոն, Ճապոնիայի Օդերևութաբանական վարչություն, Չինաստանի Օդերևութաբանական վարչություն, Գերմանիայի Ազգային օդերևութաբանական ծառայություն, Նորվեգիայի Օդերևութաբանական ինստիտուտ, Հնդկաստանի Օդերևութաբանական վարչություն, Իտալիա Ռազմական ավիացիայի և օդերևութաբանության գլխավոր գրասենյակ: Վերջիններիս հետ քննարկվել են երկկողմ համագործակցության հնարավորությունները հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդիականացման, վաղ նախազգուշացման համակարգի բարելավման, ագրոօդերևութաբանության, հիդրոլոգիայի, կլիմայական սեզոնային և երկարաժամկետ կանխատեսումների, մթնոլորտային դիտարկումների և մի շարք այլ ոլորտներում, ինչպես նաև իրականացնել մասնագետների վերապատրաստումներ: Մի շարք կառույցների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել համագործակցության հուշագրեր ստորագրելու հարցում:

Շվեյցարիայի Համադաշնությունում ՀՀ դեսպանության նախաձեռնությամբ հանդիպում են ունեցել նաև Շվեյցարիայի Համադաշնությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Կոնգրեսի շրջանակներում Հայաստանի առաջնահերթությունները և միջազգային համագործակցության ոլորտային հիմնական ուղղությունները:

Ա.թ. մայիսի 25-26-ը ներկա են գտնվել նաև Հիդրոոդերևութաբանական գործիք-սարքավորումներ արտադրող ասոցիացիայի (HMEI) ցուցահանդեսին, որտեղ ներկայացված էին հիդրոոդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի, ռադիոլոկացիոն դիտարկումների և հեռահար զոնդավորման բնագավառում համաշխարհային մասշտաբով առաջատար ընկերություններ (OTT Hydromet GmbH, SEBA Hydrometrie GmbH, Pessl Instruments GmbH, Tomorrow.io, LAMBRECHT meteo GmbH, SKYFORA, Vaisala, SOMMER GmbH, Modem, SAGIM, METEOPRESS, MicroStep-MIS, Synoptic, MPS system, Baron, Cambell, etc): Ներկայացված էին նաև ընկերություններ, որոնք առաջարկում են արհեստական բանականության լուծումներ, բազմաբնույթ աղետների վաղ նախազգուշացման և ազդարարման համակարգեր:

## **7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**


Կոնգրեսի ընթացքում ընդունվեցին մի շարք որոշումներ.

- 2024-2027 թթ. ռազմավարական պլանը,
- ՄԱԿ-ի վաղ նախազգուշացում բոլորի համար (EW4All) նախաձեռնությունը,
- ՀՕԿ-ի կողմից համակարգված Զերմոցային գագերի մոնիթորինգի գլոբալ ենթակառուցվածքի նախաձեռնությունը,
- Նախնական GBON կազմը (Initial GBON Composition),
- ՀՕԿ կարողությունների զարգացման ռազմավարությունը,
- Ծառայությունների մատուցման ՀՕԿ ռազմավարությունը և դրա իրականացման պլանը,
- Զրհեղեղներ և այլ հիդրոլոգիական ծառայությունների վերաբերյալ որոշումը,
- Երաշտի կառավարման վերաբերյալ որոշումը,
- Առողջապահական ծառայությունների վերաբերյալ որոշումը,
- 2023-2027 թվականների ընթացքում գլոբալ դիտարկումների համակարգերի էվոլյուցիայի վերաբերյալ Բարձր մակարդակի ուղեցույցը՝ ի պատասխան 2040 թվականի WIGOS-ի տեսլականի,
- ՀՕԿ դիրքորոշումը Ռադիոկապի համաշխարհային համաժողովի 2023 (WRC-23) օրակարգում,
- Կլիմայի դիտարկումների բարելավման վերաբերյալ որոշումը,
- ՀՕԿ տեղեկատվական համակարգ 2.0-ի տեխնիկական կանոնակարգը,
- Կլիմայի և հիդրոլոգիական տվյալների կառավարումը ՀՕԿ տեղեկատվական համակարգ 2.0-ում,

- Երկարաժամկետ դիտակայանների մեխանիզմի թարմացումը,
- Եղանակի համաշխարհային հետազոտական ծրագրի 2024–2027թթ. իրականացման պլանը,
- Մթնոլորտի գլոբալ ծառայության 2024–2027 թթ. գիտության և իրականացման պլանը,
- ՀՕԿ մշակման և կանխատեսման ինտեգրված համակարգի վերաբերյալ որոշումը (WIPPS),
- Կրիոսֆերայի վրա գլոբալ և տարածաշրջանային ազդեցության փոփոխությունների առաջնահերթությունները
- Տասնիններորդ ֆինանսական ժամանակահատվածի (2024–2027թթ.) առավելագույն ծախսերը,
- Սահմանադրական մարմնի կառուցվածքը՝ տասնիններորդ ֆինանսական ժամանակահատվածի համար,
- ՀՕԿ պարտադիր հրապարակումները՝ տասնիններորդ ֆինանսական ժամանակահատվածի համար,
- Սահմանադրական մարմնի նիստերի նախնական ծրագիրը՝ տասնիններորդ ֆինանսական ժամանակահատվածի համար,
- Գիտական խորհրդատվական խմբի առաջարկություններ՝ հետազոտական խորհրդի գնահատականներով,
- ՀՕԿ Գեներալային գործողությունների ծրագրի թարմացումը,
- Կոնգրեսի հաջորդ նիստերի ամսաթիվը և վայրը, համաձայն որի արտահերթ նստաշրջանը կանցկացվի 2025թ. (պայմանականորեն հունիսի 16-20)՝ կենտրոնանալով «Վաղ նախազգուշացումներ բոլորի համար» նախաձեռնության և Գործադիր խորհրդի կողմից որոշված այլ հրատապ հարցերի առաջնության վրա: Որոշվեց նաև, ըստ նախնական պայմանավորվածության, 2027թ. մայիսի 3-14-ը գումարել հերթական քսաներորդ նստաշրջանը:

Հարկ եմ համարում նշել, որ Հայաստանի պատվիրակության կողմից առաջարկված լրացումները ներառվել են ընդունված որոշումներում:

## 8. Ստորագրությունը, ամսաթիվ



08.06.2023թ